


ԽԱՂՈՂԻ ՎԱԶԻ ԳԼԹԱՎՈՐ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ՎՆԱՄՄՏՈՒՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՄՌՈՒՄ
ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
ՆՐԱՆՑ ԴԵՄ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊԸ ՀՈՂՎԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՆԱՅՏՐՈՒԹՅՈՒՆ
ԱԳՆԵՑՈՐԾԱԿԱՆ-ԴՏՀԱԲՈՒԹՅԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

634.8:632

Տ. Գ. ՍՈՒԶԱՑԱՆ

U-77

L^mmy.

ԱՏԽԵՎԱՆ է 1961 թ.

632:634.8

ԽԱՂՈՂԻ ՎԱԶԻ ԳԼԻՍՎՈՐ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ
ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
ՆՐԱՆՑ ԴԵՄ

9970

三



ԵՐԵՎԱՆ

2 U.S.Q.B.S.2.C.U.S.

1947

Министерство Земледелия Арм. ССР
управление виноградарства и плодоводства

З. Г. СУДЖЯН

Главнейшие болезни и вредители виноградной
лозы в АРМ. ССР и мероприятия по борьбе
с ними

(На армянском языке)
Армгиз. Ереван. 1947

Հայկական ՍՍՌ այգեգործական շրջաններում խաղողի վազի ամենատարածված և վառնգավար հիվանդություններն են՝ Միլդիուն (չոռ, կարմրուկ), Օփիտումը (սեպ, թող), իսկ վնասատուներից՝ Աղկույզակերը, որոնց դեմ իր ժամանակին և ճիշտ ձեզով պայքար չկազմակերպելու դեպքում, բերքի կորուստը հակայտան չափերի կարող է հասնել Խաղողի վազի վերոհիշյալ հիվանդությունները և վնասատուները ոչ միայն պատճառ են հաղիսանում բերքատվության քանակական ուժեղ անկայանը, այլև զգալի չափով իջեցնում են նաև բերքի որակը: Միլդիու և Օփիտում հիվանդություններով բացի պազից, վարակվում են նաև տերեվները, շիվերը, որի հետևիանքով այդ հիվանդությունները ոչ միայն ընթացիկ տարվա բերքատվության անկում են առաջացնում, այլև ուժեղ զարգացնան տարիներին բացասար են անդրագանում նաև հաջորդ տարվա բերքատվության վրա:

Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1946—1950 թ. թ. հնգամյա աղյանի համաձայն Ռեսպուբլիկայում խաղողի այգիների տարածությունը ընդարձակվելու է 10 հազար

հեկտարով, իսկ հեկտարի միջին բերքատվությունը
նույն ժամկետում պետք է հասցնել 80 ցենտների:
Խաղողի այգիների տարածության լայնացման և բերքա-
տվության բարձրացման պլանային առաջադրունքները
կատարելու հոմար այգիների մշակության մյուս ազրո-
միջօցառումների հետ միաժամանակ պիտք է իր ժամա-
նակին և ճիշտ ձեռվ կատարել նաև խաղողի այգիների
վիճակուների և հիվանդությունների՝ դեմ պայքարի
բոլոր միջոցառումները:

I. ԽԱՂՈՎՆ ՄԻԼԻՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՆՐԱ ԴԵՄ

Խաղողի միլիոնու կամ ինչպես շրջաններում անվա-
նում են «Չոռ» — (Արարատյան դաշտավայրում) «Կար-
մըռուկ» (այգեգործական հյուսիսային շրջաններում) «Թորշակ» (Մեղրու շրջանում) թույլ կամ ուժեղ չափով
տմեն տարի զարգանում է ուսապուրլիկայի այգեգոր-
ծական բոլոր շրջաններում: Միլիոնու խիստ ուժեղ
զարգացումը տեղի է ունենում հատկապես այն տարի-
ներին, երբ մայիս, հունիս և հուլիս ամիսների ըն-
թացքում տեղում են մեծաքանակ անձրևներ: Նման
տարիներին անժամանակ և վատ բուժված այգիներում
խաղողի բերքը միլիոնու պատճառով կարող է պակասել
50—60 տոկոսով, իսկ հիվանդության դարձացման
բացառիկ նպաստավոր տարիներին (ինչպես այդ տեղի
ունեցավ 1946 թ, որուշ կոլխոզների առանձին բըրիգա-
դաններում և օղակներում) խաղողի բերքը կարող է
փչանակ ամրողավին:

Վերջին 15 տարվա ընթացքում խաղողի միլիոնու
հիվանդությունը մեսապուրլիկայի այգեգործական շրջան-
ներում ուժեղ զարգացել է 1931, 1933, 1935, 1936,
1937, 1939, 1941, 1944, և 1946 թվերին: Ինչպես ցույց
են տալիս այս թվերը, միլիոնու ուժեղ զարգացման

վտանգը մեզ մոտ բավականին հաճախակի է կը կնվում, այդ
իսկ պատճառով միլդիուի դեմ պայքարի աշխատանք-
ները մեր այգեգործական շրջանների համար բացառիկ
կարևոր նշանակություն են ստանում: Ահա թե ինչու
մեր այգեգործ կոլխոզնիկները, օղակավարները, բրիգա-
դիրները պետք է շատ լավ ճանաչեն միլդիուն, ծանոթ
լինեն հիվանդության զարգացման բոլոր առանձնահատ-
կությունների հետ և որն ամենակարևորն է, իր ժամա-
նակին և ճիշտ ձեվով կազմակերպեն ոչոյցարի բոլոր
միջոցառումները:

ՄԻԼԴԻՈՒԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Միլդիու հիվանդությունը զարգանում է խաղողի
վազի տերեվների, շիվերի և ողկույզների վրա՝ ծաղկ-
ման սկզբից մինչև պտղի հասունացումը. թեև տերեվ-
ների վրա միլդիուն շարունակվում է զարգանալ մինչև
վեգետացիայի վերջը, սակայն այդ շրջանում հիվան-
դությունն աչքի ընկնող վնաս չի պատճառում:

Միլդիուի նշանները հետեվյալ ձեվով են արտա-
հայտվում՝

ա) Տեղանելի վրա. — Մայիսի 10—15-ից սկսած
խաղողի տերեվների վրա առաջանում են 1—3, երբեմն
մինչև 5 հատ կանաչադեղնավուն փայլուն կլոր, մեծ
քծեր (խալեր), որոնք խոնավ պայմաններում անձրեվ-
ներից հետո, կամ ցողի առկայության դեպքում տերեվի
տակի կողմից ծածկվում են սպիտակ փոշով: Հու-
նիսի 10—15-ից հետո քծերի քանակը տերեվների
վրա խիստ մեծանում է, սակայն վերջիններս լինում են
ավելի փոքր և անկյունավոր: Կանաչադեղնավուն
գույնի քծերը հետագայում գորշ գույն են ստանում,

չորակնում են, որի հետեւվանքով զդալի չափով կրծատվում է վաղի ասիմիլացիա կատարող մակերեսը: Տերեւների վրա մեծաքանակ բծեր առաջանալու կամ տերեւակոթունը վարակելու գեղքում, տեղի է ունենում տերեւաթափ:

Չորային պայմաններում վարակված տերեւի տակի կողմից հաճախ միլիոնուի բնորոշ սպիտակ փոշին չի առաջանում, նման դեպքերում վարակված տերեւը 8—10 ժամ տեղության սովորական ջերմության ուղարմաններում պետք է պահել խոնավ միջավայրում՝ թրջված բամբակի կամ ֆիլտրի թղթի մեջ, եթե նշանակած ժամանակամիջոցն անցնելուց հետո տերեւի տակի կողմից սպիտակ փոշի առաջացավ, նշանակում է տերեւի վրա առաջացած բիծը միլիլիուի նշան է:

Ամառվա վերջերին և աշնանը միլիլիուի բծերը ոչ միաժամանակ առաջանալու հետեւվանքով տերեւի վրա իրար կողքի նկատվում են տարբեր գույնի բծեր՝ համեմատաբար ավելի շուտ առաջացած գորշ գույնի բծեր, դրանց կողքին ավելի ուշ առաջացած կանաչագեղնավուն կամ գեղին բծեր և վերջապես տերեւի առողջ մնացած կանաչ գույնի մասեր: Այսպիսով ամառվա վերջերին և աշնանը միլիլիույով վարակված տերեւների վրա առաջանում է տարբեր գույների խայտաբղետություն, որի համար տերեւների վրա հիվանդության արտահարության այս ձեզ միլիլիու Մողատկ ձեվ է կոչվում:

բ) Շիվերի վրա.—Խաղողի վաղի կանաչ, մատղաշ շիվերի վրա վարակումն սկսվում է միջնանգույցներից, այդ մասում առաջանում է գորշ կապտավուն գույնի երկարավուն բիծ, վարակված մասում կեղեվը չմշկվը և ճաքճքվում է, խոնավ պայմաններում կիղեկի ճեղքվածքներից գուրա է գալիս միլիլիուի բնորոշ սպիտակ փոշին: Միլիլիույով վարակված մասում շիվը հեշտու-

թյամբ կոտրվում է: Միլլիուն հաճախ վարակում է շիվի աճող ծայրամասը, նման գեղքերում վարակված մասում շիվն իրար հակառակ ուղությամբ երկու անդամ ծովելով ձեփափոխվում է: Խաղողի շիվը միլլիույով վարակվում է հիվանդության ուժեղ զարդացման տարիներին, այն էլ ոեծ մասամբ միայն թմբային փոփած սիստեմի այգիներում:

գ) Ծաղկափթությունների և ողկույզների վրա.— Խաղողի ծաղկափթությունները միլլիույով վարակվում են կոկոսների նորմալ մեծության հասնելուց մինչև ծաղկումն ափարտվելը և պտղի կազմակերպվելը: Ծաղկափթությունը վարակվում է ամբողջությամբ կամ առանձին մասերով՝ առանձին ճյուղավորությունները, կոթունը, ծաղկափթության ծայրամասը երբեմն նույնիսկ միայն առանձին ծաղիկները: Վերոհեշյալ բոլոր դեղքերումն էլ ծաղկափթության վարակված մասը կանչաղեղնավուն գույն է ստանում, խոնավ պայմաններում ծածկվում սպիտակ փոշով և արագ չորանում: Խաղողի ծաղկափթության վրա միլլիուն խիստ արագ է զարգանում, այդ է պատճառը, որ ծաղկման շրջանում հաճախակի անձրևներ տեղալու դեղքում 1—2 օրվան ընթացքուն ծաղկափթությունները մասայաբար վարակվուի են միլլիույով, անմիջապես չորանում, որով և ոչնչանում է սպասվելիք բերքի մեծագույն մասը:

Ծաղկումն ափարտելուց հետո մինչև պտղի հասունացումը, խաղողի ողկույզը նույնակես վարակման ենթակա է: Պտղի կազմակերպման առաջին շրջանում միլլիույով վարակված ողկույզը կանաչաղեղնավուն գույն է ստանում, խոնավ պայմաններում ծածկվում սպիտակ փոշով: Ավելի ուշ վարակվելու դեղքում միլլիույով հիվանդ պտուղները գորշ կապտավուն գույն

Են ստանում, հիմքից սկսված չմշկվում և թեթեղ
շարժումից թափվում են:

ՄԻԼԴԻՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐՏԱՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆՐԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՎՐԱ

Խաղողի միլդիու հիվանդության հարուցիչը պա-
րագիտ սունկ է. նա զարդանում է միմիացն կենդանի
միջավայրուն, սնվելով ի հաշիվ բջիջների մեջ եղած
սննդանյութերի: Այդ է պատճառը, որ միլդիուի ուժեղ
զարգացումը միշտ տեղի է ունենում վազի ամենաբուռն
աճեցողության շրջանում, այն էլ նրա ամենակենսու-
նակ օրգանների՝ տերեփների, շիվերի, ողկույզների
վրա մինչև պտղի հասունացումը: Ամառվա վերջերին և
աշնան միլդիույով վարակված տերեփների մեջ-միջբջի-
ջային տարածություններում առաջանում են դեղին
գույնի հաստ թաղանթ ունեցող սեռական սպորներ,
որոնց միջոցով սունկը ձմեռում է: Գարնանը, ապրիլի
վերջերից սկսած անհրաժեշտ խոնավության և ջերմու-
թյան առակլության դեպքում ձմեռող սպորները ծլում են՝
տալով նոր տիպի ավելի բարակ թաղանթ ունեցող
սպորներ, որոնք ընկնելով անձրեփներից կամ ցողից
առաջացած լրի կաթիլի մեջ, առաջացնում են շարժուն
սպորներ: Վերջիններիս շարժումը որոշ ժամանակից
հետո կանգ է առնում, անշարժացած սպորները ծլում
են և նուրբ թելիկի նման ծիլեր են առաջացնում, որոնք
տերեփի հետեփի կողմի բաց հերձանքցների միջով ներս
թափանցելով՝ հասնում են տերեփի հլուսվածքների
միջբջիջային տարածություններին, որտեղ միառժա-
մանակ զարգանում են միայն թելիկներ՝ միցելիում

առաջացնելով։ Միցելյան թելիկները հատուկ ծծանների միջոցով ծծում են բջիջների մեջ եղած սննդանյութերը, որի հետեւանքով քլորոֆիլի հատիկները սկզբում դեղնում, հետագայում լուծվում են և տերեվի վրա առաջանում են միլդիուխն բնորոշ լուղի կաթիլի նմանվող կանաչադեղնավուն կլոր բծեր։ Խոնավ պայմաններում Միցելյան թելիկները հերձանցքների մոտ առաջացնում են նոր տիպի թելիկներ — սպորակիր թելիկներ, որոնք փնջերով դուրս գալով հերձանցքներից, տերեների տակի կողմից առաջացնում են մեծ քանակությամբ ամառալին սպորներ։ Սպորակիր թելիկների հերձանցքներից դուրս գալու և սպորներ առաջացնելու հետեւանքով է, որ խոնավ պայմաններում բիծը տերեւի տակի կողմից ծածկվում է սպիտակ փոշով։ Ամառվա վերջերին և աշնան ընթացքում տերեների միջըջիջալին տարածություններում մնացած կենսունակ միցելյան թելիկներն առաջացնում են սեռական սպորներ, որոնց միջոցով սունկը ձմեռում է։

Միլդիուխ սպորների ծլելու և տերեների մեջ թափանցելու մոմենտը տերեւի վարակման կամ ինֆեկցիայի սկիզբն է. վարակումը կատարելուց հետո մինչև հիվանդության նշանների առաջանալը սունկը անցէ կացնում իր զարգացման գաղտնի կամ թագնված շրջանը, որը ինկուբացիոն շրջան է կոչվում։ Ինկուբացիոն շրջանի ընթացքում թեև սունկը չյուսվածքների մեջ զարգանում է, սակայն հիվանդության նշանները տերեների շվերի, ողկույզների վրա դեռևս չեն նկատվում։ Ինկուբացիոն շրջանի վերջումը միայն երեվան են դալիս միլդիուխ բնորոշ նշանները՝ դեղնականաչավուն բծերը։ Գարնան վերջերից մինչև վազի վեգետացիոն շրջանի վերջը կարող են կրկնվել իրար հաջորդող մի շարք ինկուբա-

ցիոն շրջաններ, որոնց տեվողությունը պայմանավորվում է սնկի զարգացման համար նպաստավոր ջերմության և խոնավության առկայությամբ: 80 — 100 տոկոսի օգի հարաբերական խոնավության պայմաններում եթե օրվա միջին ջերմությունը 12 — 14 աստիճան է, ինկուբացիոն շրջանը առում է 10—13 օր, 20 — 25 աստիճանի դեպքում 4—5 օր, 28—30-ի դեպքում ինկուբացիոն շրջանը նորից սկսում է երկարել, տեվում է 8—9 օր, իսկ 30 աստիճանից բարձրանալու դեպքում սնկի զարգացումը կանգ է առնում:

Բորդոյան հեղուկով այգիների սրոկումը պետք է կատարել ինկուբացիոն շրջանի վերջում մինչև միլիտուի նշանների՝ գեղնականաչափուն բծի և սպիտակ փոշու առաջանալը կամ մինչև հիվանդության բոնկվելը: Այս տեսակետից ահա ինկուբացիոն շրջանների ճիշտ որոշելը չափազանց կարեւը է և գործնական մեծ նշանակություն ունի:

Մայիս, հունիս, հուլիս ամիսներին միլիտուի զարգացման համար անհրաժեշտ ջերմությունն ալգերութական բոլոր շրջաններում ապահովված է: Ինչ վերաբերում է խոնավությանը հատկապես հարավային այգեգործական շրջաններում, վերջինս լինում է ոչ միշտ, այդ է պատճառը որ միլիտուն այդ շրջաններում ուժեղ զարգանում է և մեծ վնաս պատճառուն միայն այն տարիներին, երբ մայիս, հունիս, հուլիս ամիսներին տեղում են մեծաքանակ անձրևներ:

Միլիտուի զարգացմանը նպաստում են երկարատև դանդաղ տեղացող փոքրաքանակ անձրևներ՝ քանի հորդառատ հեղեղումներ առաջացնող կարճատև անձրևները: Միլիտուի զարգացմանը նպաստում է նաև հաճախակի առաջացող և տերևների վրա երկար պահպանվող ցողը:

Ամառվա ամիսներին այգեգործական շրջաններում

փշող հյուսիս արևելյան և արևելյան չոր քամիներն ուժեղացնելով գոլորշիացման պրոցեսը, զգալի չափով կառեցնում են միլիոնի զարգացումը:

ՊԱՅԹԱՐԻ ՄԻԶՈՑԱՌՈՒԻՄՆԵՐԸ ՄԻԼԴԻՌԻՒԻ ԴԵՄ

Հայկական ՍՍԾ — ում մշակվող խաղողի բոլոր սորտերը միլիոնով ուժեղ վարակվող են, թույլ կամ բոլորպին չվարակվող, դիմացկում սորտեր մենք չունենք: Միլիոնով ուժեղ վարակվում են ինչպես տերեները, նույնպես և պտուղը, հետեապես միլիոնի բուընկան վտանգը կանխելու, խաղողի այգիների բերքը անկրորուստ պահպանելու համար պետք է ամեն տարի սիստեմատիկաբար սահմանված ժամկետներին առանձնահատուկ խնամքով և ուշադրությամբ կատարել պայքարի բոլոր միջոցառումները:

Ինչպես բույսերի այլ հիվանդությունների, նույնպես և խաղողի միլիոնուի դեմ պայքարը տարվում է քիմիական և ագրոտեխնիկական մեթոդներով, սակայն պետք է նշել որ խաղողի միլիոն հիվանդության նկատմամբ առաջնությունը տրվում է պայքարի քիմիական մեթոդին:

Միլիոն հիվանդության դեմ քիմիական պայքարը տարվում է պղնձարջասապի ջրային լուծույթի և կրակաթի խառնուրդով, որը բորդոյան հեղուկ անուն է կրում:

ա) Բորդոյան հեղուկ պատրաստելու ձևը. — Միլիոն հիվանդության դեմ պայքարելու համար գործադրվում է մեկ տոկոսային բորդոյան հեղուկ, որի պատրաստման համար 100 լիտր ջրին պետք է վերցնել մեկ կիլոգրամ պղնձարջասպ և 0, 75 — 1 կը. չմարած մաքուր կիրաթեք սրսկման համար պահանջվում է պատրաստել 600

լիտր բորդոյան հեղուկը այդ դեպքում պետք է վերցնել 6 կլգ. պղնձարջասպ, 4, 5—6 կլգ. չմարսած մաքուր կիր և 600 լիտր ջուր: Հեղուկ պատրաստելու համար պետք է ունենալ նաև 2 տակառ, վորոնցից առաջինը պետք է ունենա ոչ պակաս 600, իսկ երկրորդը 300 լիտր տարողություն: Առաջին տակառի մեջ պետք է պատրաստել կրակաթ, իսկ երկրորդի մեջ պղնձարջասպի լուծույթ: Կրակաթ պատրաստելու համար 4, 5—6 կլգ. մաքուր չմարսած կիրը պետք է գնել փայտյա կամ հողե փոքր ամանի մեջ, վերջինիս վրա աստիճանաբար ձեռքով ջուր սրսկել և սպասել մինչև որ կիրը մարի, բացվի, որից հետո ավելացնել 15—20 լիտր և ջուր, ստացված խիտ կրակաթը զգուշաւթյամբ քամելով լցնել տակառի մեջ, վրան ավելացնել 285 լիտր ջուր, որպեսզի ստացվի 300 լիտր նոոր կրակաթ: Երկրորդ տակառի մեջ պետք է լցնել 300 լիտր ջուր, ապա տուղրակով կամ որևէ այլ կտորով ջրի մեջ կախ տալ 6 կլգ. պղնձարջասպ և սպասել մինչև որ վերջինս լավ լուծվի, դրանից հետո պղնձարջասպի լուծույթը զգուշաւթյամբ պետք է ավելացնել կրակաթի լուծույթին և խառնել այնքան, մինչև որ ստացվի պարզ երկնագույն լուծույթ: Այդիների սրսկման համար ընդհանրապես պետք է գործադրել չեզզոք ուեակցիա ունեցող բորդոյան հեղուկ, որի մեջ լակմուսի կապույտ թուղթը չպետք է կարուցի և ոչ էլ կարմիրը կապտի: Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեծ քանակությամբ բորդոյան հեղուկ պատրաստելիս չեղոք ուեակցիան պահպանելը խիստ դժվար է, թույլատրվում է գործադրել թուլլ հիմքային ուեակցիա ունեցող լուծույթ: Պատրաստված 600 լիտր բորդոյան հեղուկի ուեակցիան որոշելու համար պետք է ձեռքի տակ ունենալ լակմուսի կարմիր կամ ֆենոլֆ-

տալինի սպիտակ թուղթ։ Եթե լակմուսի կարծիք թուղթը հեղուկի մեջ թաթախելուց և իսկաւյն հանելուց թեթևակի կապտվեց կամ ֆենոլֆտալինի սպիտակ թուղթը վարդագույն դարձավ, նշանակում է հեղուկն ունի թուղթ հիմքալին ռեակցիա, հետևապես ճիշտ է պատրաստված։ Ընդհանրապես մեկ կշռային մաս պղընձարջասպի և 0,75—1 կշռային մաս չմարած կրի հարաբերությունը պահպանելիս, միշտ ստացվում է թուղթիմքային ռեակցիա ունեցող հեղուկ։

Բորդյան հեղուկ պատրաստելու համար պետք է գործադրել չմարած, մաքուր կիր. մարած, փոշիացած, տնմաքուր կիր գործադրելու դեպքում ստիպված պետք է լինել խախտել կրի և պղնձարջասպի վեր նշված փոխհարաբերությունը՝ կիրն ավելի շատ վերցնել, իսկ շատ կիր գործադրելը դեպքում նրա մասնիկները կմընան հեղուկի մեջ և սրսկում կատարելու ժամանակ կիսանդարեն սրսկիչ առարատի նորմալ աշխատանքին։ Բացի դրանից մարած փոշիացած կրով պատրաստված բորդյան հեղուկի կաթիլները տերեներին ամուր չեն կը չում և անձրեներից հեշտությամբ լվացվում են։

Անհամեշտ է հիշել նաև որ կիրը մարելու ժամանակ նրա վրա պկբից պետք է որքան հնարավոր է քիչ քանիակությամբ ջուր սրսկել, այնքան որ կիրը թրջվի։ Չմարած կրի վրա սկզբից մեծ քանակությամբ ջուր լցնելու, կրի կոշտերը ջորվ ծածկելու դեպքում, ջուրը կլանի կրի ջերմությունը, կիրը կամ բոլորովին չի մարի, չի բացվի, կամ կմարի չափազանց դանդաղ և ոչ լրիվ չափով։ Այս տեսակետից չափազանց օգտակար է չմարած կրի վրա ձեռքով ջուր սրսկելուց անմիջապես հետո վերջինս պահել արեի ճառագայթների տակ, որպեսզի արեի ջերմությունն էլ ավելի արագացնի կրի մարելու պրոցեսը։

Բորդոյան հեղուկ պատրաստելու համար նախա-
տեսված ջրի կեսը միշտ պետք է օգագործել պղըն-
ձարջասպի լուծույթ պատրաստելու համար, իսկ մնացած
կեսը կը պահպան պատրաստելու համար: Արդեւվում և
պղնձարջասպի թանձը լուծույթ պատրաստել և վեր-
ջնս լցնել թանձը կը պահպան վրա, որից հետո միայն
ջուր ավելացնել: Պատրաստված բորդոյան հեղուկը նույն
օրը պետք է օգտագործել, մյուս օրվան չթողնել:

բ) Այդիների սրսկման տեխնիկան և մեկ հեկտարի
հեղուկի ծախսի նորման.— խաղողի այդիների սրսկու-
մը կատարվում է ավտոմաքս և տրեմաս (վերժորել) կոչ-
վող սրսկիչ ապարատներով, որոնց անխափան աշխա-
տանքն ապահովելու համար անհրաժեշտ է:

1. Ապահովել սրսկիչի հերմետիկությունը, որի հա-
մար ոեզերվուարի, թեզանի (շլանդ), բրանտսպուտի և
ծայրապանակների ամրացման տեղերը պետք է լավ
ամրացնել:

2. Ավտոմաքսի մխոցը պետք է աշխատի լավ: այն
հաշվով, որ ոեզերվուարի մեջ 11—11,5 լիտր հեղուկ լըց-
նելուց հետո միոցի 100—120 հարոցից ապարատի մեջ
կը լուսակվի, 4—5 ատմոսֆեր օդի ճնշում, որը փոշիացած
մանը կաթիլներով սրսկում կատարելու համար անհրա-
ժեշտ պայման է:

3. Մխոցի նորմալ աշխատանքն ապահովելու հա-
մար պետք է հաճախակի յուղել մխոցի մանժետը (կաշ-
վյա մասը) որպեսզի վերջինս չչորանա:

4. Սրսկիչի ծայրապանակը, բրանտսպուտի ֆիլտրը
պետք է պահել մաքուր վիճակում, այդ նպատակի հա-
մար հեղուկն ապարատի մեջ լցնելիս քամել մանը անց-
քեր ունեցող ցանցապատ ձագարի միջոցով: Սրսկում
կատարելիս ծայրապանակը և ասեղը հաճախակի մաք-

բել, ոեզերվուարը և բրանտսպոլուը ամեն օր աշխատանք - ներն ավարաելուն պես ջրով մաքուր լվանալ:

5. Սրսկում կատարելիս բրանտսպոյտի ծայրապանակը որքան հնարավոր է հնոու պահել վազից որպեսզի հեղուկի խոշոր կաթիլներ չառաջանան և չսահեն տերեկ-ների վրայից:

6. Վազը սրսկել բոլոր կողմերից հավասարաչափ: Տերեները սրսկել ինչպես վերեի, նույնպես և տակի կողմից: Խնամքով սրսկել նաև բոլոր ողկույզները:

Մեկ հեկտար այգու լուրաբանչյուր ժամկետի սրսկ-ման համար սահմանել բորդոյան հեղուկի ծախսի հետևյալ նորմաները: Առաջին սրսկման համար 600—800 լիտր, երկրորդ սրսկման՝ 800—1000, երրորդ և հետա-գա սրսկումների համար 1000—1200 լիտր լուծույթ: Նորատունեկ և երիտասարդ (մինչև 5 տարեկան) այգի-ները սրսկելիս բորդոյան հեգուկի նշված նորմաները կրծատել 30—50 տոկոսի չափով:

Այգիների սրսկումը կատարել օրվա բոլոր ժամերին, դադարեցնել միայն ուժեղ քամբների և անձրեների ժամ, նաև:

Հաճախ ամպամած եղանակներին սրսկումները դադա-րեցնում են, ենթադրելով որ շուտով անձրեներ կլինեն, բորդոյան հեղուկի հետքերը կլվացվեն տերևների վրայից, հետեւապես սրսկումը անտեղի կկորչի: Այս տեսա-կետը միանգամայն սխալ է, միշտ չե որ ամպամած եղանակներին անմիջապես հաջորդում են անձրեներ: Հաճախ ամբողջ օրը երկինքը ամպամած է լինում, սա-կայն անձրեներ չեն տեղում, նման դեպքերում ինչ խոսք որ այգիների սրսկումը պետք է շաբունակել, հաշվի առնելով այն համապամանքը, որ սրսկումն ավար-տելուց հետո եթե նույնիսկ կեսից մինչև մեկ ժամ

անձրեներ չտեղան, ալդ ժամանակամիջոցում հեղուկի կաթիլները կչորանան, ամուր կկպչեն տերեներին և եթե դրանից հետո անձրեներ էլ լինեն, նրանք համարյաթե չեն լվացվի տերեների վրայից։ Այլ խնդիր է եթե անձրեները տեղում են սրսկումից անմիջապես հետո՝ մինչև կաթիլների չորանալը կամ հենց սրսկման ժամանակ. բորդոյան հեղուկի հետքերը այս գեպքում տերեների վրայից լվացվուժ են. նման գեպքերում անձրեները կտրվելուն պես սրսկումը պետք է կրկնել։

Դ) Այդիների սրսկման ժամկետները. — Ինչպես սնկային մյուս հիվանդությունների, նույնպես և միլոդիութիւն գեմ բորդոյան հեղուկի գործազրումն ունի հիվանդության հետադա զարգացումը կանխող—պրոֆիլակտիկ նշանակություն։ Եթե վազի տերեները ողկույզները վարակվել են մինչև սրսկում կատարելը, միևնույն է սրսկման միջոցով նրանց չի կարելի առողջացնել։ Սրսկում կատարելուց հետո տերեների, ողկույզների, շիվերի վրա չորացած և ամուր կպած կապտագույն նյութը, որը խստ թունավոր է սնկի սպորների համար, աստիճանաբար լուծվելով՝ անձրեից և ցողից առաջացած ջրի կաթիլների մեջ թունավոր միջավայր է ստեղծում և եթե միլիութիւն սպորները ընկնում են այդ կաթիլների մեջ, թունավորվում են, այլև չեն ծրում, հետեւապես և վարակում չեն առաջացնում։ Այս տեսակետից ահա խաղողի այգիների սրսկումը բորդոյան հեղուկով միշտ պետք է կատարել տերեների ողկույզների շիվերի վարակվելուց առողջ։

Խաղողի այգիների սրսկման ժամկետները անցյալում սահմանվում էին միայն ըստ վազի ֆենոլիդիական ֆազերի, այն է՝ առաջին սրսկումը ծաղկելուց առաջ, երկրորդը՝ ծաղկելուց հետո, երրորդը՝ պաղի կազմակերպ-

ման շրջանում և աղին, առանց հաշվի առնելու հիվանդության զարգացման դինամիկան՝ կապված արտաքին պայմանների, հատկապես ջերմության և խոնավության հետ, որի համար էլ չեր ապահովում միլիոնի դեմ պարքարի բարձր էֆեկտիվությունը:

Ներկայումս խաղողի այգիների սրսկման ժամկետները սահմանվում են ըստ միլիոնի զարգացման ինկուբացիոն շրջանների կամ ինկուբացիոն կորագծի, կապելով այն վաղի զարգացման ֆենոլոգիական ֆազերի հետ, այն է՝ յուրաքանչյուր ժամկետի սրսկումը կատարվում է ինկուբացիոն շրջանի վերջում՝ մինչև հիվանդության նշանների առաջանալը, մինչև նոր և ավելի մասաւական վարակում կատարվելը: Համաձայն այդ նոր մեթոդի, առաջին սրսկումը պետք է կատարել առաջին ինկուբացիոն շրջանի վերջում, երկրորդ սրսկումը՝ երկրորդ ինկուբացիոն շրջանի վերջում, երրորդ սրսկումը՝ չորրորդ ինկուբացիոն շրջանի վերջում և չորրորդ սրսկումը՝ վեցերորդ ինկուբացիոն շրջանի վերջում: Այն հանգամանքը, որ երկրորդ ինկուբացիոն շրջանից հետո օրվա միջին ջերմությունն ավելի բարձրանում և կայունանում է, հետագա ինկուբացիոն շրջանները ավելի կարճ են տևում—4—5 օր, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն չի դդացվում 4—5 օրը մեկ անգամ սրբակումը կրկնել, որի համար էլ երրորդ և հինգերորդ ինկուբացիոն շրջանները բաց են թողնված՝ երշրջադարձ սրսկումը կատարվում է չորրորդ ինկուբացիոն շրջանի վերջում, չորրորդ սրսկումը վեցերորդ ինկուբացիոն շրջանի վերջում:

Երկար տարիների դիտողությունները ցույց են տվել, որ Արարատյան գաշտավայրի և մոտավորապես նույնատիպ Աշտարակի, Կոտայքի, Միկոյանի շրջան-

A 18683

ներում միլդիուի զարգացման առաջին ինկուբացիոն շրջանն ավարտվում է մայիսի 10-ից մինչև 20-ը երկրորդը՝ մայիսի վերջերին, երրորդը՝ հունիսի 5-ից մինչև 10-ը, չորրորդը՝ հունիսի 10—15-ը, հինգերորդը՝ հունիսի 20—25-ը, վեցերորդը՝ հուլիսի մեջից 5-ը և այլն։ Այդպործական հյուսիսային շրջաններում—Նոյեմբերյանի, Ալավերդու, Շամշադինի, Իջևանի, ուր վազի վեգետացիան Արարատյան դաշտավայրի այգեգործական շրջանների համեմատությամբ 8—10 օրով ուշ է սկսվում, ինկուբացիոն շրջաններն էլ նույնպես 8—10 օրով ուշ են սկսվում, իսկ Մեղրու շրջանում վեգետացիան ավելի շուտ սկսվելու հետեւանքով ինկուբացիոն շրջաններն էլ 8—10 օրով շուտ են ավարտվում։ Հետեւապես Արարատյան դաշտավայրի և նույնատիպ ազգեղործական մյուս շրջաններում խաղողի այգիների առաջին սրսկումը պետք է կատարել առաջին ինկուբացիոն շրջանի։ Վերջում, որը համընկնում է վազի զարգացման այն շրջանի հետ, երբ կանաչ շվերի վրա կան 3—4 մեծ տերեւ, մոտավորապես մայիսի 16—20-ը, երկրորդ սրսկումը երկրորդ ինկուբացիոն շրջանի վերջում, որը համընկնում է վազի ծաղկման շրջանին—մայիսի 25-ից մինչև հունիսի 5-ը, երրորդ սրսկումը չորրորդ ինկուբացիոն շրջանի վերջում այն է՝ ծաղկումն տվարովելուց հետո—հունիսի 10—15-ը, չորրորդ սրսկումը վեցերորդ ինկուբացիոն շրջանի վերջում պատրի ամենաբուռն աճեցողության (զուռայի կազմակերպման շրջանում)՝ հունիսի 25—30-ը կամ հուլիսի 1—5-ը։ Հյուսիսային այդպործական շրջաններում այգիների սրսկումը Արարատյան դաշտավայրի համեմատությամբ պետք է կատարել 8—10 օրով ավելի ուշ, իսկ Մեղրու շրջանում հատկապես ցածրագիր դոնալի դյուղերում՝ ընդակառակը 8—10 օրով շուտ։

Բացառիկ խոնավ տարիներին հուլիսի 10—20-ը
մոտավորապես 7-րդ ինկուբացիոն շրջանի վերջում
պետք է կատարել նաև այդիների 5-րդ սրսկումը:

Անհրաժեշտ է նշել, որ այդեզործական մի շաբք
շրջաններում—Աշտաբակ, Կոտայք, Միկոյան, Մեղրի և
այլն—խաղողի այդիներ կան ինչպես ցածրադիր զոնա-
րում, նույնպես և ավելի բարձրադիր նախալեռնային զո-
նայում: Այդ տեսակետից ցածրադիր գոնայի գյուղերում
այդիների սրսկումը պետք է կատարել սահմանված
ժամկետի սկզբի օրերին, իսկ բարձրադիր զոնայի գյու-
ղերում՝ վերջին օրերին:

Միլդիուի դեմ պայքարի հաջողությունն ապահո-
վելու խնդրում վճռական նշանակություն ունի նաև այ-
դիների սրսկման տեսղությունը, որուն ձգձգվում, եր-
կար է տեսում յուրաքանչյուր ժամկետի սրսկումը, այն-
քան պայքարի էֆեկտիվությունը ցածր է լինում և
ընդհակառակը, այս տեսակետից ահա սրսկման աշխա-
տանքները կոլխոզներում պետք է կազմակերպել այն-
պես, բանվորական ուժը և ապարատուրան բրիդագանե-
րի և օղակների միջև բաշխել այն հաշվով, որ յուրա-
քանչյուր ժամկետի սրսկումը ավարտվի ամենաշատը
5-6 օրվա ընթացքում:

Միլդիուի դեմ պայքարի էֆեկտիվությունն էլ ավե-
լի բարձրացնելու համար անհրաժեշտ է սրսկման աշխա-
տանքներին զուգընթաց սահմանված ժամկետներին կա-
տարել նաև ազդրուելինիկական հետեւյալ միջոցառումները:

ա) Այդիների փորելը. — Վաղ գարնան մինչև տերեւ-
բողբոջների բացվելը, տերեւների մեծանալը և վարակ-
ման ընդունակ դառնալը, ալգիները պետք է փորել:
Ալգեֆորի ժամանակ հողի երեսին գտնված միլդիուով
վարակված խաղողի տերեւները, որոնք իրենց մեջ կըում

են միլդիուի ձմեռող սպորներ, թագվելով հողի տակ
ոչնչանում են և նոր վարակում առաջացնելու տեսա-
կետից անվտանգ են դառնում։ Հետեւապես գարնանը
որքան ուշ է կատարվում այդեփորը, այնքան այդ ակ-
րոսի ջոցառումը որպես միլդիուի դեմ պայքարի միջա-
ցառում, կորցնում է իր նշանակությունը։

բ) Վազերի խչմարելը.—Թմբային փոված սխաեմի
այգիներում վազեր խչմարելը սրսկման որակը լավացնե-
լու տեսակետից նույնպես խիստ կարեսը է, առանց
խչմարի հնարավոր չէ վազը սրսկել հավասարաշափ տե-
րեկի տակի և վերեկի կողմից կամ որսկել տերեներով
ծածկված և հողի վրա փոված ողկույցները։ Այս տեսա-
կետից միշտ սրսկում կատարելուց առաջ վազերը պետք
է լավ խչմարել։

գ) Սուդ տալը.—Խաղողի ալգիների լուսավորության
և օդափոխության պայմանները լավացնելու, միլդիուի և
առհասարակ մյուս բոլոր տեսակի հիվանդությունների
և վնասատուների դեմ պայքարի գործին նպաստելու
տեսակետից վազի վեգետացիայի սկզբից, առնվազն եր-
կու անգամ պետք է սուդը տալ - հեռացնել վազի վրա-
յից ավելորդ շիվերը և տերեները։ Առաջին անգամ սուդը
պետք է տալ մայիսի 2-րդ կեսին՝ մինչև ծաղկում
սկսվելը, երկրորդ անգամ՝ 2-րդ սրսկումից հետո՝ մինչև
3-րդի սկսելը, այն՝ է՝ հունիսի 10—15-ը։

դ) Մոլախոտերի հեռացնելը. — Այդիներում աճած
մոլախոտերը խանգարում են վազի լուսավորությանը
և օդափոխությանը, ուժեղ աճելով և ծածկելով վազը
խանգարում են, նաև սրսկման աշխատանքներին, հետեւ
վազես միլդիուի զարգացման վտանգավոր շրջանում
առնվազն երկու անգամ այգիները պետք է քաղհանել՝
առաջին անգամ քաղհանը պետք է կատարել մինչև երկ-

բորդ սրակումն սկսելը — այն է՝ մայիսի վերջերին, իսկ երկրորդ անգամ՝ երրորդ սրակումը սկսելուց հետո մինչև չորրորդի սկսելը:

Թմբալին փոված սկսեմի այդիներում միլիոնի գեղ պայքարի խնդրում որպես ազրոտեխնիկական միջոցառում կարեոր նշանակություն ունի նաև այդիների ոռոգումը: Անձրեվային խոնավ տարիներին, երբ հաւաքապես ծաղկման շրջանում միլիոնի լուրջ վտանգ է սպառնում — այդիները պետք է ջրել ըստ պահանջի և չափավոր, նման գեղագերում պետք է խուսափել ջուրը լճացած գրությամբ երկար ժամանակ թողնել թմբերը արանքում — առուների մեջ կամ ջրով փողողել թմբերը որոնց վրա փոված են լինում մեծ քանակությամբ կանաչ շիվեր՝ վարակման խստ ենթակա ծաղկած ողկույզներով և տերեներով:

2. ԽԱՐՈՂԻ ՕՒԴԻՈՒՄ ՀԻՎԱՆԴՈՒՅԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՆՐԱ ԴԵՍ

Խաղողի վազի երկրորդ վտանգավոր հիվանդությունն է օիդիումը, որին շրջաններում առ կամ թող անուն են տալիս: Օիդիումը տարածված է Ռեսպուբլիկայի այգեգործական բոլոր շրջաններում և թույլ կամ ուժեղ չափով զարգանում է ամեն տարի: Մասսայական զարգացման տարիներին պայքարի միջոցառումները ժամանակին և որակով չկատարելու դեպքում օիդիումն էլ միլիոնի նման բերքի հակայական կորուստ կարող է պառ ճառել: Այս տեսակետից ահա խաղողի այդիների բերքն անկորուստ պահպանելու համար ամեն տարի սահմանված ժամկետներին պետք է պայքարել նաև խաղողի վազի օիդիում հիվանդության դեմ:

ՕԻԴԻՈՒՄԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Օիդիումը զարգանում է խաղողի վազի տերևների, շիվերի, ծաղկափթությունների, ողկույզների վրա՝ խաղողի ծաղկման շրջանից սկսած մինչև օգոստոսի վերջերը, մինչև պտղի լրիվ հասունացումը:

Օիդիումի նշանները վազի վարակված մասերի վրա հետեւյալ ձևով են արտահայտվում.

ա) տերևների վրա.—Մայիսի վերջերին հիվանդության զարգացման բացատիկ նպաստավոր տարիներին, նույնիսկ մայիսի 10—15-ից սկսած տերևների վրա առաջանում են կլոր փոքր փայլուն բծեր, որոնք տերևի վերեի կամ տակի կողմից, երբեմն նույնիսկ տերևի երկու կողմից ծածկվում են մոխրագույն նուրբ փոշով: Բծերի քանակը տերևների վրա հետզհետե աճում է, վերջիններս լինում են ցրված տերևի անբողջ մակերեսի վրա, բծերը հաճախ ձուլվելով իրար հետ, բանում են տերևի մակերեսի զգալի մասը: Օիդիումի փոշին տերևի վրայից հեշտությամբ սրբվում — մաքրվում է, որից հետո տերևի վրա մնում են մուգ գորշ կամ սև գույնի ածխացած բծեր: Տերևների վրա մեծաքանակ բծեր առաջանալու դեպքում վերջինս դադարում է ասիմիլացիա կատարելուց, աճեցողությունը կանգ է առնում, երբեմն տերևը նույնիսկ անժամանակ թափվում է:

բ) Շիվերի վրա.—Գարնան վերջերին շիվերի հիմքի մասում առաջանում են մոխրագույն փոշով ծածկված տուանձին բծեր, որոնք հետագայում մեծանալով ձուլվում են իրար հետ և շիվի հիմքի մասը, երբեմն և շիվի ամբողջովին՝ տերևների հետ միասին ծածկվում են մոխրագույն փոշով: Վարակված շիվի վրալից փոշին հեշտությամբ մաքրվում է, որից հետո կեղեի վրա պարզ նկատվում են դորշացած կամ ուհացած տուանձին կամ

իրաը ձուլված բծեր, որոնք երբեմն բոնում են շվի ամբողջ մակերեսը։ Փայտացած մատերի վրա օփղիումի գորշացած կամ սևացած բծերը ավելի պարզ նկատվում են աշնան տերևաթափից հետո կամ գարնան էտի ժամանակ։ Օիդիումով վարակված շվի աճեցողությունը թուլանում է, մատը նորմալ չի փայտանում, որի հետեւ վանքով ձմռան ընթացքում հեշտությամբ ցրտահարվում է։

գ) Ծաղկափթությունների և ողկույզների վրա։ — Օիդիումի զարդացման բացառիկ նպաստավոր տարիներին ծաղկափթությունները վարակվում են նույնիսկ զեռ չծաղկած կոկոն վիճակում, նման դեպքերում ծաղկափթությունն ածծկվում է մոխրագույն փոշով, կոկոնները չեն բացվում, ավելի ուշ վարակվելու դեպքում ծաղկելը չի բեղմնավորվում, ծաղկափթությունը չուբանում է։ Օիդիումով ավելի հաճախ վարակվում է խաղողի ողկույզը, պտղի կազմակերպման առաջին շրջանից սկսած մինչև հասունացումը։ Սկզբնական շրջանում ողկույզի վրա նկատվում են օիդիումով վարակված մոխրագույն փոշով ծածկված առանձին պառողներ, հիվանդության զարգացման համար նպաստավոր սլաքմանների առկայության դեպքուն վարակվում է ամբողջ ողկույզը։ Եթե պտուղը օիդիումով վարակվում է շուտ՝ պտղի կազմակերպման առաջին շրջանում, աճեցողությունը կանգ է առնում, պտուղն ալլև չի մեծանում, գորշանում, ամրանում և չորանում է։ Պտուղն ավելի ուշ վարակելու դեպքում (հունիսի վերջերին, հուլիսի սկիզբներին) պտղի արտաքին շերտի՝ մաշկի աճեցողությունն է միայն կանգ առնում, մաշկի բջիջները կորցնում են իրենց պուածականությունը և չդիմանալով պտղի ներքին աճող մասի ճնշմանը, մաշկը պատռվում է—

պառւղը ճեղքվում է, ճեղքվածքներից պարզ նկատվում են կորիզները: Չորային պայմաններում մաշկի պատրովածքի եղբերը հետզհետե խցանանում են, պտուղն ոնցվնաս պահպանվում է, իսկ խոնավ պայմաններում ճեղքված պտուղներն արագ փառում են:

Օիդիումով վարակված տերեները, շիվերը և ողկույզները արձակում են նեխած ձկան հոտ:

ՕԻԴԻՈՒՄԻ ՀԱՐՈՒՑԻՉՔԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՐԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՎՐԱ

Օիդիումը նույնպես սնկային հիվանդություն է, նրա հարուցիչն է պարագիտ սունկը, որը հատուկ ծծանաների միջոցով խլելով բույսի կենդանի բջիջների մեջ եղած սննդանյութերը, տերեների շվերի և ողկույզների վրա առաջացնում է վերև նկարագրված ձեր հիվանդագին երեսութները: Օիդիումի հարուցիչ սունկն աշնան վերջերին վարակված մատերի և քնած աչքերը ծածկող թեփուկների վրա կամ վերջիններիս արանքում առաջացնում է հստացած պատեր ունեցող միցելիում որոնց միջոցով սունկը ձմեռում է: Հետեւյալ տարի գարնան ձմեռող միցելիումը ընկնելով նոր բացված տերեվների, կանաչ շիվերի վրա, առաջացնում է նոր միցելիում և ամառային սպորներ: — Միցելիումի և ամառային սպորների առաջացման հետևանքով վազի վարակված մատերի մատերի և ողկույզների վրա առաջանում են մեծ քանակությամբ շագանակագույն մուգ գորշ կամ սև գույնի գնդասեղի գլխի ձեր մարմիններ: Այն հանդամանքը որ օիդիումը երեան է գալիս

զարնան վերջերից և շարունակվում է ինտենսիվ զարդանալ ամռան ընթացքում—ցույց է տալիս որ օիդիում հիվանդություն առաջացնող սունկը հաջողությամբ տանում է ջերմության ուժեղ տատանումները և խսկապես օիդիումի զարգացումը սկսում է 5° -ից, $25-30^{\circ}$ ջերմության պայմաններում զարգացումը խիստ ուժեղ է գնում, 40° -ից բարձր կանգ է առնում։ Օիդիումի զարգացման համար պահանջվում է օդի բարձր խոնավություն։ Զրի կաթիլսերի ներկայությունն այս դեպքում անհրաժեշտ չէ, այս տեսակետից օիդիումի զարգացման համար անձրևներն առանձին նշանակությունն չունեն։ Ըսդհանուր առմամբ կարելի է առել որ օիդիումի զարգացման համար պահանջվում է ամպամած, տոթ, շոգեղանակներ։

Օիդիումը խիստ ուժեղ է զարգանում քարքարոտ լանջերում, ավագանողերում, ձորերում և այլն։ Օիդիումով առաջին ներթին ուժեղ վարակվում են ծառերի տակ գտնված վազերը։

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՕԻԴԻՈՒՄԻ ԴԵՄ

Հայկական ՍՍՌ-ում մշակվող խաղողի հիմնական սորտերը բացի Աղատենի (կախեթ) և սև Ելեփիս (մալահի) սորտերից մնացածները օիդիումով ուժեղ են վարակվում։ Կանաչկենի (խարջի) ճիլար, Մեղրու շըջանում մշակվող Արեիկ (ալաղուռա) և մի շարք այլ սորտեր օիդիումով այնքան ուժեղ են վարակվում, որ եթե մայիսի վերջերից սկսած մինչև օգոստոսի 10-ը ծծումբով 4—5 անգամ չփոշոտվեն, բերքի $60-70$ տոկոսի կորուստը միայն օիդիում հիվանդությունից անխուսափելի կլինիք Այս տեսակետից ահա առանց օիդի-

ումի դեմ սխտեմատիկ պայքարի, չի կարելի ապահովել խաղողի այգիների բարձր բերքատվությունը:

Օիդիումի դեմ և այքարը տարվում է հիվանդության զարգացման շրջանում՝ վազերը 4—5 անգամ ծըծումբով փոշոտելու մեթոդով:

Փուռման տեխնիկան են մեկ հեկտարի ծծումբի ծախսի նորման.—Խաղողի այգիների փոշոտումը կատարվում է ծծմբածաղկով կամ աղացած ծծումբով։ Ծծմբածաղկը կամ թորած ծծումբը, թորման միջոցով ստացվում է կոշտ ծծումբից։ Աղացած ծծումբը նույնական ստացվում է կոշտ ծծումբից, սակայն ոչ թե թուրելու, այլ հոտուկ աղացների միջոցով աղալու մեթոդով։

Ինչպես վերև արդեն նշվեց, միլդիու հիվանդությունն առաջացնող անկի միցելյան թելիկները մտնում են վարակված պտղի կամ տերեկի հյուսվածքների միջը ըջային տարածությունները և այնուեղ են զարգանում, իսկ վարակված տերեկի կամ ողկույզի վրա առաջանում են միայն միլդիու առառային սպորներ, մինչդեռ օիդիումի դեպքում վարակված տերեների պտղի կամ շվերի վրա բացի սպորներից լինում են նաև սիցելյան թելիկներ, իսկ բույսի մեջ մտնում են միայն ծծանների, որոնց միջոցով սունկը սնունդ է վերցնում ըջներից։ Այլ խոսքով ասած միլդիու հիվանդություն առաջացնող սունկը ներքուստ սովոր պարագիտ է, իսկ օիդիում հիվանդություն առաջացնողն արտաքուստ սընկող պարագիտ է, այս իսկ պատճառով միլդիու դեմ գործարկող թույնը—բորդոյան հեղուկը սպանում է միայն տերեների վրա դրսում առաջացած սպորներին, իսկ տերեների մեջ գտնված միցելյան թելիկները մտնում են անվնաս և հետագայում նպաստավոր պայաններ

լինելու դեպքում նորից սպորներ են առաջացնում, իսկ օիդիումի դեմ գործադրվող թունը—ծծումբը սպանում է վազի վարակված տերեների շիփերի և պաղի վրա գտնը ված միցելյան թելիկներին և սպորներին և թույլ շի՝ տալիս այլիս նոր սպորներ առաջանալու։ Այս տեսկեատից ծծումբը ոչ միայն թունավորելով սպորներին կանխում է հիվանդության հետաքա առաջումը, այլև ոչընչացնելով միցելյան թելիկներին, առողջացնում է արդեն վարակված պոտոդը կամ տերեր, հետեւապես ծծումբը ոչ միայն հիվանդության առաջումը կանխող միջոց է, ինչպես բորդոյան հեղուկն է, այլև բուժող միջոց։

Ծծումբի միջոցով ոնկի միցելյան թելիկները և սպորները ոչնչացնելու նպատակով փոշոտումը պետք է կատարել այնպես, որ ծծումբի մասնիկները գլխավորապես ընկնեն վազի հիվանդացած մասերի վրա, շիփեն անկի թելիկների և սպորների հետ։ Այս նպատակին հասնելու համար փոշոտուն կատարելիս փոշոտիչ ապարատի ծծմբատար խողովակի ծայրամասը միշտ պետք է ուղղված պահել դեպի վարակման ենթակա տերեները, շիփերը և ողիույզները։ Վազի բունը, բազմամյա թեկերը, որոնք օիդիումով չեն վարակվում, ինչպես նաև վազի շրջապատի հողը ծծումբով չպետք է փոշոտել։

Փոշոտումը պետք է կատարել Տիալտոպ կամ ՄՎկլոչող փոշոտիչ ապարատներով, որոնք ապահովում են ծծու բի հավասարաշափ շրումը վազի վրա։ Կատեզորիկ ձևով պետք է արգելել ծծումբը շաղ տալ ձեռքով կամ մառայի տոպրակների միջոցով մաղել վազի վրա։

Յուրաքանչյուր ժամկետի փոշոտման համար մեկ հեկտարի վրա պետք է ծախսել 20—30 կլգ. ծծումբ։ Թույլ աճ ունեցող սորտերը, ինչպես նաև երիտասարդ այդիները

փոշոտելլիս գործադրել 20 կլգ., իսկ փարթամ աճ ունեցող վազերը և հին այգիները փոշոտելիս — 30 կլգ. ծծումբ:

Աղացած կամ թորած ծծումբը հաճախ երկար ժամանակ խոնավ պայմաններում պահելու հետևանքով կոշտերի է վերածվում: Նման դեպքերում փոշոտում կատարելուց առաջ ծծումբի կոշտերը պետք է ձեռքով փշրել, անհրաժեշտության դեպքում մաղել, հետո միայն օդապործել: Եթե ծծումբը խոնավացած է, փոշոտում կատարելուց առաջ պետք է փոել ստվերում և չորացնել:

Ծծումբի փոշոտման պրոցեսը հեշտացնելու, փոշոտման որակը լավացնելու, ինչպես նաև սնկի հետ շփկելու մակերեսը մեծանալու նպատակով փոշոտում կատարելիս ծծումբին պետք է խառնել սահմանված նորմայի կեսի չափով (10—15 կլգ.) մարած կրի փոշի: Որպեսզի կրի մեջ կոշտեր չմնան և փոշոտման ժամանակ չխանգարեն ապարատի նորմալ աշխատանքին, մարած կիրճն օդապործելուց առաջ նույնպես պետք է մաղել: Արգելվում է այգիների փոշոտման համար օդապործել չմարած կիր:

(բ) Այգիների փոշոտման ժամկետները. — Այգեղործական շրջաններում՝ Բերիայի անվտան, Էջմիածնի, Աշտարակի, Արտաշատի, Հոկտեմբերյանի և այլն գոյություն ունեն օիդիումի մշտական օջախներ՝ այգիների որոշ մասերում կան առանձին վազեր, որոնց վրա դրեթե ամեն տարի օիդիումի նշաններն ավելի շուտ են երեան գալիս: Մայիսի 10-ից հետո հաճախակի պետք է ստուգել այդ օջախները. Եթե մայիսի 12—15-ին օջախներում հիվանդության նշաններ հայտաբերվեցին, նշանակում է օիդիումի զարգացումն արդեն սկսվել է, մի քանի օրից հետո հիվանդության նշանները կերեան նաև մնացած այգիներում, հետևապես օջախներում հիվանդություն հայտնաբերվելուն պես պետք է սկսել խաղողի այգիների

առաջին փոշտումը: Դիտողությունները ցույց են տվել
որ օիդիումի զարգացումն Արարատյան դաշտավայրի և
այգեգործական նույնատիպ մյուս շրջաններում սկսվում
է ծաղկումն սկսվելուց մի քանի օր առաջ՝ ուրեմն այ-
դիների առաջին փոշտումը պետք է սկսել հենց այդ
օրերին: Երկրորդ փոշտումը պետք է կատարել առաջին
փոշտումից 10—15 օր հետո, որը համընկնում է այդիների
մասսայական ծաղկման վերջին շրջանի հետ, այն է՝ հունիսի
5—10-ը, երրորդ փոշտումը պետք է կատարել հունիսի
20-ից մինչև 30-ը, երբ պտուղներն արդեն բավակա-
նին մեծացել են կամ ինչպես ասում են զուռան բռնել
է. չորրորդ փոշտումը պետք է կատարել հուլիսի 10—
20-ը: Այգեգործական հյուսիսային շրջաններում, ուր
հիվանդության զարգացումն ուշ է սկսվում, վերոհիշալ
չորս ժամկետի փոշտումները պետք է կատարել 8—10
օրով ուշ, իսկ Մեղրու շրջանում ընդհակառակը, վեգե-
տացիան շուտ սկսելու հետեանքով 8—10 օրով շուտ։
Մեղրու, էջմիածնի, Աշտարակի, Բերիայի անվան շրջան-
ներում օիդիումի զարգացման բացառիկ նպաստավոր
տարիներին անհրաժեշտ է լինում 5-ըդ, երբեմն նույնիսկ
6-ըդ անգամը ևս այգիները փոշտել: Պտղի հասունացման
շրջանում, այն է՝ օգոստոսի 5—10-ից հետո ալգիների-
փոշտումը պետք է դադարեցնել, որովհետեւ այդ շրջա-
նում պտուղն սկսում է հասունանալ, իսկ հասունա-
ցած պտուղը ինչպես հայտնի է օիդիումով ալլս չի
վարտկում։

Յուրաքանչյուր ժամկետի փոշտումը պետք է ա-
վարտել 6—8 օրվա ընթացքում։

Օիդիումի դեմ պալքարի ինդրում կարևոր նշանա-
կություն ունի նաև ազրոտեխնիկական միջոցառում-

Ների ճիշտ և ժամանակին կիրառումը, որոնց մասին
արդեն նշված է միլլիումի գեմ պայքարի միջոցառում-
ների գլխում:

ՅԱՂՈՂԻ ՈՂԿՈՒՅՉԱԿԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՆՐԱ ԴԵՍ

Հայկական ՍՍՌ այգեգործական շրջաններում խա-
զողի ամենատարածված և խիստ վտանգավոր մխասառուն
է ողկույզակերը, որն ամեն տարի բերքի զգալի կարուստ
է պատճառում: Ողկույզակերի հասցրած մխասն առանձ-
նապես մեծ է Բերբայի անվան, Էջմիածնի, Աշտարակի
և Մեղրու շրջաններում, ուր գերակշռում են ողկույզա-
կերով խիստ ուժեղ վարակվող կանաչկենի և Արեիկ
սուրտերը: Ողկույզակերի մխասն էլ ավելի աչքի է ընկ-
նում այն տարիներին, երբ խաղողի հասունացման և
բերքահավաքի շրջանում լինում են մեծաքանակ անձ-
րեներ, վորոնք խիստ չափով նպաստում են վարակված
պտուղների ուժեղ վրտելուն:

ՈՂԿՈՒՅՉԱԿԵՐԻ ԱՌԱՋԱՑՐԱԾ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԸ

Ողկույզակերը մխասում է խաղողի կոկոններին,
ծաղիկներին և պտուղներին: Ողկույզակերի առաջաց-
րած մխաս կածքները հետևյալ տեսք ունեն.

Մայիսի 15 – 20-ից սկսած ողկույզակերի թիթեռը
խաղողի կոկոնների վրա գնում է սպիտակագեղնավուն
հասարակ աչքով հազիվ նկատելի փոքր ձվեր: Ձվադրու-
մից մի քանի օր հետո ձվից դուրս եկած թրթուրը
կրծում է կոկոնները, ծաղիկները, նոր կազմակերպված
երիտասարդ վարսանդը, որոնք հետագայում չորանում
են: Իրար հետեւից մի քանի կոկոններ կամ ծաղիկներ

այս ձեռվ վասակերու հետ միաժամանակ վասատուն սպիտակ ոստայնով իրար է միացնում առողջ և վասակած կոկոնները և ծաղիկները և թագնվերով ոստայնի մեջ, այնտեղ սնվում է մինչև հարսնյակավորվելլ:

Ողկույզակերի երկրորդ սերնդի թրթուրները վնասում են պտղին խակ ժամանակ, իսկ երրորդ սերնդի թրթուրները՝ հասունացման շրջանում: Առաջին դեպքում վասատուն ծակելով իրար մոտ գտնված պտուղները ներս է մտնում և մինչև հարսնյակավորվելը սնվում է պտղի պարունակությամբ, վնասված պտուղները դրշգույն են ստանում և չորանում են, խակ երկրորդ դեպքում նույն ձևով վասառում է հասունացած պտուղները, որոնք հատկապես խոնավ տարբիներին ուժեղ փառում են:

ՈՂԿՈՒՅԶԶԱԿԵՐԻ ԲԻՌԼՈԳԻԱՆ

Խաղողի ողկույզակերը հայաստանի պայմաններում տալիս է երեք սերունդ, առաջին սերնդի թրթուրները վասառում են խաղողի վաղին կոկոնակալման և ծաղկման շրջանում, երկրորդ սերնդի թրթուրները պտղի դուրս շրջանում, մոտավորապես հունիսի վերջերին և հուլիսի առաջին օրերին, երրորդ սերնդի թրթուրները վասառում են պտղի հասունացման շրջանում:

Ողկույզակերը ձմեռում է հարսնյակ վիճակում վաղի ընի և թևերի կեղեփի ճեղքվածքների արանքում, ինչպես նաև աշնան այգում մնացած վասակած պտուղների մեջ:

Գարնանը, մոտավորապես ապրիլի վերջերին, ձմեռող հարսնյակներից դուրս են դալիս վնասատուի առաջին սերնդի թիթեռները, որոնք մայիսի առաջին օրերից սկսած ձռ են դնում խաղողի ծաղկափթթումների կոկոնների վրա, ձվադրումից 5—7 օր հետո դուրս են դալիս փոքր թրթուրներ, որոնք սնվում են խաղողի կոկոններով և ծաղիկներով: Առաջին սերնդի թրթուրների հարսնյակավորումը սկսվում է հունիսի սկզբնե-

րին և տեսում է 10 — 15 օր, հունիսի վերջերին հարսնյակներից գուրս են դալիս երկբորդ սեղնդի թիթեռները, որոնք ձու են դնում պառազների վրա: Զվից գուրս եկած թրթուրները անցը բաց անելով ներս են մտնում պաղի մեջ և մնվում են պաղի ներքին պարունակությամբ՝ մինչև հարսնյակավորվելը: Երկրորդ սերնդի թրթուրների հարսնյակավորումը սկսվում է հուլիսի երկրորդ կեսից: Օգոստոսի սկզբներին երկրորդ սերնդի հարսնյակներից գուրս են դալիս երրորդ սերնդի թիթեռները, որոնք ձու են դնում արդեն հասունացած պաղի վրա, ձվադրումից 5—7 օր հետո գուրս են դալիս թրթուրներ, որոնք անցը բաց անելով հասունացած պաղի վրա, ներս են մտնում պաղի մեջ և մինչև հարսնյակավորվելը սնվում են պառազների պարունակությամբ: Երրորդ սերնդի թրթուրների հարսնյակավորումը տեղի է ունենում ուշ աշնան վաղի բնի և թերթի կեղեկի տակ կամ վնասված պատաժների մեջ ուր նրանք ձմեռում են:

Խաղողի ողկույզակերը ուժեղ գարգանում է փարթամ աճ ունեցող այգիներսւմ, ստվերոտ տեղերում: Ողկույզակերով չափաղանց ուժեղ են վարակվում խիտ ողկույզներ ունեցող սորտերը, ինչպես օրինակ կանաչկենին: Նոսր ողկույզ ունեցող սորտերը ինչպես Ազատենին, Մսխալին համեմատաբար ավելի թույլ են վարակվում:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՈՂԿՈՒՅՉՉԱԿԵՐԻ ԴԵՄ

Խաղողի ողկույզակերի դեմ պայքարը տարվում է քիմիական և ազրոտեխնիկական մեթոդներով: Քիմիական պայքարը տարվում է աղիքային և կոնտակտ թույներով:

Աղիքային թույների միջոցով պայքար է տարվում ուղկույզակերի թրթուրների դեմ, որոնք կրծելով կալ-

ցիումի արսենատով կամ փարիզյան կանաչով փոշոտված կամ սրբակված ծաղիկները, պատողները թունափրփում և ոչնչանում են, իսկ կոնտակտ թույների գործադրության դեպքում միաժամանակ ոչնչանում են նաև ողկույզակերի ձվերը։ Այս աեսակետից ահա քիմիական պայքարի էֆեկտիվությունն ապահովելու համար պետք է շատ լավ իմանալ ողկույզակերի յուրաքանչյուր սերնդի թիթեռների ձվադրման և թրթուրների ձվից դուրս գալու ժամանակը։

Ողկույզակերի թիթեռների թռիչքի ընթացքը որոշելու համար ապրիլի վերջերից սկսած սինչե Յըդ սերնդի թիթեռների թռիչքի վերջը, այն է՝ օկոսառու 5—10-ը ողկույզակերով ուժեղ վարակվող այգիներում պետք է դնել որսող թակարդներ։ Թակարդները սովորական թիթեղից պատրաստած կլոր մեջ 30—35 սմ, տրամագիծ, 10—14 սմ. բարձրությունն ունեցող ամաններ են։ Վերջիններս ամրացվում են 1—1,5 մետր երկարություն ունեցող փայտի ձողերի վրա և կանգնեցնում թմբերի մեջ այն հաշվով, որ թակարդները հողի մակերեսից լինեն 1—1,2 մետր բարձրության վրա։

Ողկույզակերի թիթեռները որսալու համար թակարդները կիսով չափ պետք է լցնել ջրի և գոշաքի խառնուրդով։ Այս նպատակի համար մեկ մաս 60 տոկոսային դոշաբին պետք է խառնել 8 մաս ջուր։ Դոշաբի փոխարեն կարելի է օգտագործել նաև պատոկա, (շաքարի արգունաբերության մնացորդ) որը նույնպես շաքար է պարունակում։ Թակարդների մեջ լցրած դոշաքի լուծույթը կամ պատոկան 1—2 օրից հետո սկսում է թթվել և իր հոսով գրավել ողկույզակերի թիթեռներին, որոնք ընկնելով լուծույթի մեջ չեն կարողանում այլևս դուրս գալ և սատկում են։ Թակարդ-

ների մեջ բացի ողկույզակերի թիթեռներից ընկնում
են նաև այլ թիթեռներ, ուստի անհրաժեշտ է լավ ճա-
ռաշել ողկույզակերի թիթեռներին, որոնց մարմնի մե-
ծությունը մոտ կես ստանդարտար է և առաջի գույք
թեփերի վրա կան կանաչամոխրավուն, դեղնավուն և
կապտամոխրավուն բծերով բաց գույնի շերտեր:

Թիթեռների թոփչքի ընթացքը որոշելու համար
պետք է ամեն օր նայել թակարդները, գուրս հանել
լուծուլթի մեջ ընկած ողկույզակերի թիթեռները, հաշ-
վել և նրանց քանակը դրանցել դիտողության տետրում:
Թակարդների մեջ լցրած հեղուկը պակասելու դեպքում
պետք է ջուրն ավելացնել այնքան, որ հեղուկը թա-
կարդի մեջ միշտ լինի 6—8 սմ. բարձրության վրա:
10—12 օրը մեկ անգամ հեղուկը պետք է փոխել՝
թակարդների մեջ եղած հին հեղուկը թափել թակարդը
մաքուր լվանալ, ապա նոր հեղուկ լցնել:

Առաջին սերնդի թիթեռների թոփչքն ավարտվելուն
պես դիտողությունները ժամանակակիրառես կարելի է
գաղաքեցնել, թակարդների մեջ այլևս նոր լուծուլթ չլցնել
մինչև առաջին սերնդի թրթուրների հարսնեկավորման
վերջը, որից հետո թակարդները նորից լցնել և դիտո-
ղությունները վերսկսել: Երկրորդ սերնդի թիթեռների
թոփչքն ավարտելուն պես դիտողությունները նույն
ձևով գաղաքեցնել մինչև երրորդ սերնդի թիթեռների
թոփչքի սկիզբը:

Յուրաքանչյուր շրջանում ելնելով այդիների դիր-
քից աարքեր տեղերում (բարձրունքի վրա, ձորի մեջ
կամ փոս ընկած տեղերում) իրարից 100—150 քայլ
հեռավորության վրա պետք է դնել 2—3 թակարդ:

Դիտողությունները պետք է համաձարել կոլխոզի
աղբոտեխնիկին կամ պայքարի մասնագետին, վերջինս

պետք է ունենա դիտողության տետր և ամեն անգամ
դիտողություն կատարելուց հետո տետրում դրանցի
թակարդի մեջ ընկած թիթեռների քանակը, իսկ դի-
տողության արդյունքների մասին ամեն օր հազորդի-
հողբաժին:

Հողբաժինը ստանալով շրջանի այգիներում դրված թա-
կարդների վրա կատարված դիտողությունների տվյալ-
ները, հաշվում է թե քանի օրից հետո կակավի թիթեռ-
ների մասսայական ձվադրումը և թրթուրների ձվից
դուրս գալը: Առաջին սերնդի թրթուրների ձվից դուրս
գալն ընդհանրապես սկսվում, է թիթեռների թոփչքն
սկսվելուց 20—25 օր հետո, երկրորդ և երրորդ սերնդ-
ներին՝ թոփչքն սկսվելուց 8—10 օր հետո, հետեւապես
եթե ստացված տվյալների համաձայն առաջին սերնդի
թիթեռների թոփչքը սկսվել է ապրիլի 25—30-ը, ապա
թրթուրների ձվից դուրս գալը կակավի մայիսի 20—
25-ը, ուրեմն ողկույզակերի առաջին սերնդի թրթուրների
դեմ պայքարը պետք է սկսել մայիսի 20—25-ը: Այս
ձևով պետք է հաշվել նաև 2-րդ և 3-րդ սերնդների
թրթուրների ձվից դուրս գալու սկիզբը:

Երկար տարիների դիտողությունների հիման վրա
Արարատյան դաշտավայրի այգեգործական շրջանների
համար ողկույզակերի դեմ քիմիական պայքարի հե-
տևալ ժամանակը կարելի է սահմանել՝

1-ին սերնդի դեմ՝ մայիսի 20—25-ը, երկրորդ սե-
րնդի դեմ հուլիսի 10—15-ը, երրորդ սերնդի դեմ օգոս-
տոսի 10—15-ը:

Աշուարակի, Կոտայքի և Նախալեռնալին գոճնայի
մյուս շրջաններում ողկույզակերի գարգացումն ուշ սկս-
վելու հետեւանքով քիմիական պայքարն էլ պետք է
սկսել 8—10 օրով ուշ իսկ Մեղքու շրջանում ընդհա-

կառակելը՝ շուտ սկսվելու հետևանքով 8—10 օրով ավելի
շուտ:

Ողկույզակերի դեմ պայքարի նշված ժամկետները
օրինակ են. տարվա կմայական պայմանների հետ
կապված նրանք կարող են փոփոխության ենթարկվել՝
մի քանի օրով ուշ կամ շուտ սկսել Հողբաժինները
օգտվելով շրջանում տրված թակարդների տվյալներով,
պետք է սահմաննեն ողկույզակերի յուրաքանչյուր սե-
րընդի դեմ պայքարի վերջնական ժամկետներ և հանձ-
նարարեն կոլլսոզներին քիմիական պայքարը տանել
այդ ժամկետներում:

ա) Ողկույզակերի դեմ պայքարի քիմիական մե-
թոդները.—Ինչպես արդեն նշվեց, ողկույզակերի դեմ
քիմիական պայքարը տարվում է աղիքալին և կոնտակտ
թուլիներով, որպես աղիքալին թույն գործադրվում է
կալցիումի արսենատ և փարիզյան կանաչ, իսկ որպես
արտաքին աղդեցության կոնտակտ թույն՝ նիկուլին
սուլֆատ:

1. Կալցիումի արսենատի գործադրումը.—Ողկույ-
զակերի թրթուրների դեմ պայքարելու համար այգինե-
րը պետք է փոշոտել կալցիումի արսենատով: Մեկ հեկ-
տար այգու փոշոտման համար առաջին սերնդի դեմ պայ-
քարելու դեպքում (մոտավորապես վազի ծաղկման շր-
ջանում) պետք է գործադրել 10—15 կլգ. կալցիումի
արսենատ, իսկ երկրորդ սերնդի թրթուրների դեմ 15—
20 կլգ.: Կալցիումի արսենատը ուժեղ թույն է նաև
մարդկանց համար, այդ պատճառով երրորդ սերնդի
թրթուրների դեմ (պաղի հասունացման շրջանում) չի
գործադրվում:

Օիդիումի և ողկույզակերի առաջին և երկրորդ սե-
րունդների դեմ պայքարի ժամկետները համընկնելու

գեղըռւմ կալցիումի արսենատը կարելի է խառնել ծծումբի հետ և կատարել միացյալ փոշոտում, չխախտելով ծծումբի և կալցիումի արսենատի ծախսի նորմաները:

Փոշոտումը պետք է կատարել բացառապես տիպով կամ ՌՎ—1 փոշուախ ապարատներով:

2. Փարիզյան կանաչ.— կալցիումի արսենատի բացակայության դեպքում ողկուլգակերի դեմ կարելի է գործադրել նաև փարիզյան կանաչ՝ սրսկման մեթոդով: Մյո նպատակի համար յուրաքանչյուր լիուր ջրին պետք է վերցնել 2 գրամ փարիզյան կանաչ, 4 գրամ չմարած կիր: Մեկ հեկտար այդու սրսկման համար առաջին սերնդի թրթուրների դեմ պայքարելիս ծախսել 1,2-ից 1,6 կլզ. փարիզյան կանաչ, 2,4-ից 3,2 կլզ. չմարած կիր: Փարիզյան կանաչն էլ կալցիումի արսենատի նման թունավոր լինելու պատճառով օգտագործվում է միայն առաջին երկրորդ սերտւրների թրթուրների դեմ.

Միլզիուի և ողկուլգակերի առաջին և երկրորդ սերունդների դեմ պայքարի ժամկետները համընկնելու դեպքում մեկ տոկոսային բորդոյան հեղուկին կարելի է խառնել փարիզյան կանաչ լիուրին 2 գրամի հաշվով և կատարել միացյալ սրսկում: Բորդոյան հեղուկին փարիզյան կանաչ խառնելիս կիր չպետք է ավելացնել որովհետև անհրաժեշտ քանակի կրի ավելցուկ բորդոյան հեղուկի մեջ միշտ լինում է:

3. Նիկոտին սուլֆատ,— Ողկուլգակերի դեմ պայքարելու խնդրում նիկոտին սուլֆատը մյուս թույների համեմատությամբ ունի այն առավելությունը, որ բացի թրթուրներից ոչնչացնում է նաև ողկուլգակերի ձվերին: Նիկոտին սուլֆատը ողկուլգակերի դեմ գործադրում է օճառի հետ խառնած սրսկման մեթոդով, այդ

նալատակի համար 12 լիտր (մեկ դույլ) ջրին պետք է վերցնել 30—40 գրամ նիկոտին սուլֆոտ 40—50 գրամ տնտեսական հեղուկ օճառ։ Նիկոտին սուլֆատի բանավորական լուծույթ պատրաստելու համար սկզբում քիչ քանակությամբ ջրի մեջ պետք է օճառը լավ լուծել, որից հետո ավելացնել մնացած ջուրը և ապա վերջում խառնել նիկոտին սուլֆատը։ Մեկ հեկտար այգու սրբական համար առաջին սերնդի դեմ պայքարելիու գործադրի 600—800—լիտր, իսկ երկրորդ և երրորդ սերնդի դեմ 1000—1200 լիտր բանվորական լուծույթ։

Միլիլիումի և ողկուզակերի դեմ պայքարի ժամկետները համընկնելու գեղքում բորբոյան հեղուկին խառնել նիկոտին սուլֆատ յուրաքանչյուր լիարին և զրոմի հաշվով, առանց օճառ ավելացնելու։

Ողկուզակերի առաջին և երկրորդ սերնդների թրթուրների կերակրման շրջանը բավականին երկար է տևում, ուստի անհրաժեշտ է այդ սերնդների դեմ պայքար տանել երկու անգամ՝ առաջին անգամ սրոկում կամ փոշոտում կտտարելուց 6—8 օր հետո պայքարը նորից կրկնել։

Ողկուզակերի թրթուրները, ինչպես հայտնի է անվում են բացառապես խաղողի կոկոններով, ծաղիկներով և պտուղներով, այդ իսկ պատճառով քիմիական պայքարի ժամանակ պետք է սրսկել և փոշոտել զիստինի պայքարի ծաղկափթթությունները և ողկուզները, այս նպատակի համար քիմիական պայքար սկսելուց առաջ վազերը պետք է լավ խչմարել, այնուհետև պայքարը տանել երկու հոգով, որոնցից մեկը ձեռքավ անընդհատ բաց պետք է անի տերևներով ծածկված ողկուզներնը, իսկ մյուսը սրուկի կամ փոշոտի։

բ) Պայքարի ազրութեանիկական մեթոդները։ —

1. Գարնան էտի և այգեփորի ժամանակ կարառված վազի պառաված հին թիերը և բները, որոնց կեղեղի տակ ձմեռում են ողկույզակերի հարանյակները, մինչև թիթեռների թոփչքի սկսելը (տպրիլի 20-25-ը) պետք է արդուց հեռացնել: Միաժամանակ էտ կամ այգեփոր կատարելու ժամանակ բնի և թիերի մեռած կեղեր մաքրելիս մեխանիկորեն ոչնչացնել նաև նրանց տակ ձմեռած հարսնյակները:

2. Վաղերը իշմարելու և սուդ տալու աշխատանքները կատարել ագրոկանոններով նախատեսված ժամկետներին և բարձր որակով:

3. Այդիները ջրել ագրոկանոններով նախատեսված ժամկետներին և չափավոր, որովհետև խոնավ սլայմաններում ողկույզակերն ամելի ուժեղ է զարդանում:

Նախազգուշական միջոցները.—Ողկույզակերի գեմ գործադրվող թույները՝ կալցիումի արսենատը, փարիզյան կանաչը և նիկոտին սուլֆատը ուժեղ թույներ են նաև մարդկանց և անասունների համար, հետեւապես թունավորման դեպքերից խուսափելու համար պետք է կիրառել նախազգուշական հետեյալ միջոցառումները.

ա) Կալցիումի արսենատով փոշոտում կատարելիս օգտագործել հերմետիկ փակվող փոշոտիչներ, այն հաշվով, որ աշխատանքի ժամանակ փոշին դուրս թափվելի միմիայն փոշետար խողովակի ծայրապահակից.

բ) Փոշոտում կատարելիս պետք է հադնել բարձր օճիք, երկար թիեր ու նեղ մանժետ ունեցող արտահագուստ (խալաթ), հագնել համապատասխան գլխարկ կամ գլուխը թաշկինակով կապել: Փոշոտում կատարելիս հագնել ուղիղատոր և ակնոց:

գ) Արգելվում է փոշոտում կատարելու ժամանակ ուժեր, ծխել կամ ջուր խմել:

դ) Փոշոտման աշխատանքները վերջացնելուց հետո արտահագուստը հանել լավ թափ տալ, ձեռքերը և երեսը մաքուր լվանալ.

ե) Քիմիական պայքարն սկսելուց առաջ խոտը քաղել և այցուց հեռացնել.

զ) Ողկույզակերի դեմ քիմիական պայքար տարած այգիներից քաղած աերեները օգտագործելուց առաջ մի քանի անգամ ջրով մաքուր լվանաբ:

է) Ողկույզակերի երրորդ սերնդի դեմ քիմիական պայքար տանել միայն նիկոտին սուլֆատով, որի թունավոր ազդեցությունը կալցիումի արսենատի և փարիզյան կանաչի հետ համեմատած կարճատե է և ավելի թույլ է արտահայտված:

Ողկույզակերի դեմ քիմիական պայքար տարած այգիների խաղաղը ուտելուց առաջ մի քանի անգամ ջրով մաքուր լվանաբ:

Արգելել կողմնակի մարդկանց և երեխաների մուտքը ողկույզակերի դեմ քիմիական պայքար տարած, այդինքներում:



ԲՈՎԱՆԴԱԿԱՌՅՈՒԹՅՈՒՆ

Էջ

1.	Խաղողի միլդիու հիվանդությունը և պայքարի միջոցաւ առաջները նրա դեմ	4
Միլդիուի նշանները		5
Միլդիու հիվանդության հարուցիչը և արտաքին պայ- մանների ազգեցությունը նրա զարգացման վրա	8	
Պայքարի միջոցառումները միլդիուի դեմ	11	
2. Խաղողի օիդիում հիվանդությունը և պայքարի միջո- ցառումները նրա դեմ	21	
Օիդիումի նշանները	22	
Օիդիումի հարուցիչը և արտաքին պայմանների ազգե- ցությունը նրա զարգացման վրա	24	
Պայքարի միջոցառումները օիդիումի դեմ	25	
3. Խաղողի ողկույզակերը և պայքարի միջոցառումները նրա դեմ	30	
Ողկույզակերի առաջացրած վնասվածքները	30	
Ողկույզակերի բխուզգիան	31	
Պայքարի միջոցառումները ողկույզակերի դեմ	32	

Պատ. խմբագիր՝ Զ. Ս. Բեթանյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան

Վ. 00996 Պատվեր 593. Տիրաժ 2000. Տոլագր. 2,5 մամ. Հեղ. 1,4. Ժամանութ
Առողագրված է տպագրության 27/11-47 թ.

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգր. և Հրատ. Վարչ.
№ 1 տպարան. Երևան, 1947

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008456

149

MAP 4 B.

A II
18683